

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4

ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 25. 11. 2014թ. նիստի՝

մասնակցությամբ խորհրդի 19 անդամների,

նախագահությամբ դեկան Ս.Հայրապետյանի

ՕՐԱԿԱՐԳ - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի դեկանատի 2013-2014

ուսումնական տարվա աշխատանքային հաշվետվություն

2. Պատմաբանասիրական ֆակուլտետի հեռակա համակարգի

ուսանողների 2014-2015 ուստարվա վարձավճարի մասնակի

փոխհատուցման մասին

3. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - Պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի

հաշվետվությունը դեկանատի 2013-2014 ուստարվա գործունեության մասին:

Զեկուցողը 2013-2014 ուստարվա հաշվետվության մի շարք կարևոր տվյալներ ներկայացրեց դրան նախորդած ժամանակահատվածի՝ 2012-2013 ուստարվա համապատասխան իրողությունների հետ համեմատության մեջ, գտնելով, որ դա հնարավորություն կտա ավելի լավ պատկերացնելու գործերի վիճակը ֆակուլտետում նոր ուսումնական տարվա սկզբին:

Առաջին ակնառու, նաև մտհոգիչ իրողությունը ֆակուլտետի ուսանողության թվի զգալի նվազումն է. առկայում՝ 49, հեռակայում՝ 76 ուսանողով: Նվազման միտումն առկա էր դեռ նախորդ տարիներից, բայց ոչ այն քանակով, ինչ 2013-14-ին, երբ տարբերությունը նախորդ ուստարվա համեմատ հասավ 128-ի /668-541/: Իհարկե, սա համատարած երևույթ է օբյեկտիվ հիմքերով, բայց ոչ առանց սուբյեկտիվ տարրի: Խոսքը վերաբերում է մուտքի՝ ընդունելության լրացուցիչ բարդություններին՝ 3-ից ոչ պակաս միասնական քննություններին /լրագրության բաժնում նույնիսկ 4/

Այս առումով կարևորվեց տարեկան ՄՈԳ-ի հիման վրա փոխատեղման /ռոտացիայի/ թափանցիկ և օբյեկտիվ կազմակերպումը, որը լավ սովորող ուսանողների քանակի ավելացման, նրանց մեջ

ինստիտուտի նկատմամբ հավատի ու վստահության նախապայմաններից մեկն է: Ինչպես և 2012-13-ին, հաշվետու ուստարում ևս ռոտացիայի շնորհիվ անվճար ուսուցման համակարգ տեղափոխվեցին 6 ուսանողներ: Դեկանատը լուրջ ուշադրություն է դարձնում նաև ծնողների հետ կապի խնդիրներին, որը պահանջում է համբերատար, հավասարակշիռ ու նրբանկատ վերաբերմունք:

Նկատելիորեն նվազել է ուստարում վտարված ուսանողների թիվը, ընդ որում, չեն եղել վտարումներ հաճախումների կամ կարգապահական այլ խախտումների պատճառով: 2012-13--ին երկու կիսամյակներում բակալավրատուրայից՝ 16, մագիստրատուրայից՝ 1 վտարում, 2013-14-ում՝ բակալավրատուրայից՝ 6 և մագիստրատուրայից՝ 1 ուսանող:

2012-13 ուստարվա համեմատ 15-ով աճել է կրթաթոշակ ստացող ուսանողների քանակը՝ հասնելով 91-ի: Սա նույնպես վկայում է ուսման տարեկան միջին առաջադիմության բարձրացման մասին, հատկապես մագիստրատուրայում: Այսինքն՝ այդքանով ավելացել է 71 միավորից ավելի տարեկան առաջադիմության ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը:

Հաշվետու տարում նկատելի աճ է գրանցվել ֆակուլտետի առկա և հեռակա բակալավրիատում ուսման բացարձակ առաջադիմության ցուցանիշների բարելավման ուղղությամբ, առաջին կիսամյակում 10, երկրորդում 14 տոկոսով՝ առկայում և 12 տոկոսով՝ հեռակայում:

Ավելի հուսադրող է այն, որ նախորդ մի քանի տարիների համեմատությամբ նկատելիորեն ավելացել է գերազանցության դիպլոմով ավարտողների թիվը՝ 2012-13-ին 1-ի դիմաց 2013-14-ում՝ 9 / 1-ՀԼԳ, 4-պատմ. 4 իրավագ. մասնագիտություններով/:

Ուսանողների սոցիալական վիճակի բարելավման հարցերը ֆակուլտետում առանձնահատուկ ուշադրության են արժանանում. դրանցից մեկը վարձավճարի մասնակի փոխհատուցման /գեղչերի/ հարցն է, որն ինչպես մյուս ֆակուլտետներում, մեզ մոտ էլ ուսանողներին նյութական աջակցության լավագույն տարբերակն է,

որից գրեթե առանց էական տարբերությունների, ամեն ուստարի օգտվում է առկայի և հեռակայի 50-55 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում զգալի աշխատանքներ են կատարվել ինստիտուտի ուսումնական գործընթացի բարեփոխումների գործող ժամանակացույցին համապատասխան. ֆակուլտետի խորհրդում լսվել և քննարկվել են մասնագիտական ամբիոնների տարեկան գործունեության հաշվետվությունները, լուսաբանվել են ամբիոնների աշխատանքում առկա բացթողումները, հետևողական աշխատանք է տարվում կրթության որակի բարելավման գործում առկա խնդիրների աստիճանաբար հաղթահարման, ֆակուլտետի գործունեությունը կրթական գործընթացի արդի բարեփոխումներին համահունչ դարձնելու ուղղությամբ, իրականացվում է նպատակային գործունեություն կադրային և նյութական ռեսուրսների շարունակական համալրման ու որակական բարելավման ուղղությամբ:

Առարկայական օլիմպիադաների կազմակերպումը հայոց լեզվից, հայ գրականությունից և պատմությունից: Թեմատիկ ստենդների ձևավորումը հայոց լեզվի և հայ գրականության ամբիոններում՝ նվիրված մեր կրթության ու մշակույթի պատմության նշանավոր իրադարձությունների, անվանի գիտնականների ու գրողների տարելիցներին: Աշակերտական ընթերցումներ /մարտ/ Հայոց մեծ եղեռնի 100-ամյակի առթիվ՝ «Առաջին աշխարհամարտը և հայոց նորագույն պատմության հիմնախնդիրները» թեմայով մասնակցությամբ մարզի 24 դպրոցների աշակերտների, 4 թեմատիկ խմբերով:

Թարմացվում է ամբիոնների մասնագիտական գրականությունը. Միայն մի երկու օրինակ բերեմ. մենք նկատելի պակաս ունենք հատկապես իրավագիտական գրականության գծով: «Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի օգնությամբ պ/ի ամբիոնը կարողացավ ձեռք բերել 40 օրինակ «Եվրոպական միության իրավունք» ուսումնական ձեռնարկից և «Եվրոպական

միության արդարադատության դատարանի նախադեպեր» ժողովածուից 10 օրինակ: Այդպես էլ՝ արդի հայ գրողների հետ ամենամյա հանդիպումներից հետո գրականության ամբիոնը ամեն անգամ հարստանում է նրանց նոր գրքերով: Բոլոր երեք մասնագիտական ամբիոններում հաշվետու ուստարում շարունակաբար ներդրվել են էլեկտրոնային դասախոսությունների նոր տարբերակներ:

Լուրջ ուշադրություն է դարձվել ֆակուլտետի ներքին կարգուկանոնի, հաճախումների, ուսանողական առօրյայի խնդիրներին, ամբիոններում ու դեկանատում փաստաթղթավարման աշխատանքներին:

Հիշարժան են Պ.Սևակի 90-ամյակին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթը, արդեն ավասնդական դարձած ամենամյա հանդիպումները ժամանակակից հայ գրողների հետ՝ նվիրված գրականության մերօրյա խնդիրներին, ֆակուլտետի շրջանավարտ, հայ արդի արձակի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ վաղամեռիկ Լևոն Խեչոյանին նվիրված հուշ-հանդիպումը՝ գրողի հարազատների, երևանյան հյուրերի, ասմունքի և արվեստի վարպետների, նաև քաղաքի մտավորականության մասնակցությամբ, միջոցառումներ, որոնք ունեն ընդգծված գիտաճանաչողական, նաև ուսուցողական, նաև գեղագիտական-դաստիարակչական նշանակություն:

Բազմաթիվ ուսանողներ պատվով ու հաջողությամբ են ներկայացնում ինստիտուտը հանրապետական գիտաժողովներում, օլիմպիադաներում, մասնագիտական ստուգատեսներում: 2013-2014-ին մեր ուսանողները շարունակել են ակտիվորեն մասնակցել այլ բուհերում կազմակերպվող գիտական կոնֆերանսներին /Գավառ, Ստեփանակերտ, Երևան, Վանաձոր/, «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղին:

Անհրաժեշտ համարվեց ընդգծել մասնագիտական ամբիոնների հետ դեկանատի արդյունավետ աշխատանքը, գործի ընդհանուր շահերից բխող սերտ համագործակցությունը ՈԻՄ

վարչության բաժինների, Որակի կենտրոնի, գրադարանի, և այլ ստորաբաժանումների հետ:

Ֆակուլտետի աշխատանքներում կան նաև բացթողումներ, այսպես՝ իջել է բացարձակ առաջադիմության մակարդակը մագիստրատուրայում, դեռևս ակտիվացման կարիք ունի ուսանողական խորհրդի գործունեությունը, մտահոգիչ է լսարանների քրոնիկ պակասը, մասնագիտական կաբինետների բացակայությունը, գույքի, ուսումնական համակարգիչների ֆիզիկական ակնհայտ մաշվածությունը: Նախորդ ուստարվա համեմատությամբ՝ 2013-2014-ին շուրջ 130-ով պակասել է ուսանողների թիվը, նվազման միտումը, ի դեպ, շարունակվում է: Սրանով պայմանավորված՝ շուրջ 20 միլիոնով պակասել է ֆակուլտետից ինստիտուտի բյուջե մտնող վարձավճարների գումարը՝ 123 միլիոնից իջնելով 105 միլիոնի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Ս.Խաչատրյան, Ն.Ավետիսյան,

Ս.Կուրազյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Լսելով և քննարկելով պատմաբանասիրական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը /զեկ.՝ դեկան Ս.Հայրապետյան/ խորհուրդը նշում է. որ հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում զգալի աշխատանքներ են կատարվել ինստիտուտի ուսումնական գործընթացի բարեփոխումների գործող ժամանակացույցին համապատասխան. ֆակուլտետի խորհրդում լսվել և քննարկվել են մասնագիտական ամբիոնների տարեկան գործունեության հաշվետվությունները, լուսաբանվել են ամբիոններում տարվող բազմաբնույթ աշխատանքում դեռևս առկա բացթողումները, ամենօրյա աշխատանք է տարվում կրթության որակի բարելավման գործում առկա հիմնախնդիրների աստիճանական հաղթահարման, ֆակուլտետի գործունեությունը կրթական գործընթացի արդի բարեփոխումներին համահունչ դարձնելու ուղղությամբ:

Հաշվետու ուստարում նկատելի աճ է գրանցվել ֆակուլտետի առկա և հեռակա բակալավրիատում, մագիստրատուրայում ուսման բացարձակ առաջադիմության ցուցանիշների բարելավման ուղղությամբ, հետևողականորեն իրականացվում է նպատակային գործունեություն կադրային և նյութական ռեսուրսների շարունակական համալրման ու որակական բարելավման բարելավման ուղղությամբ, թարմացվում է ամբիոնների մասնագիտական գրականությունը, անընդհատ ներդրվում են էլեկտրոնային դասախոսությունների տարբերակներ: Լուրջ ուշադրություն է դարձվում ներքին կարգուկանոնի, հաճախումների, ուսանողական առօրյայի խնդիրներին, ամբիոններում և դեկանատում փաստաթղթավարման աշխատանքներին: Բազմաթիվ ուսանողներ պատվով ու հաջողությամբ են ներկայացնում ինստիտուտը հանրապետական գիտաժողովներում, օլիմպիադաներում, մասնագիտական ստուգատեսներում ու մրցույթներում, բանավեճերում: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը հարցերը, վարձավճարի մասնակի փոխհաստուցման՝ զեղչերի, նյութական աջակցության կազմակերպման, ռոտացիայի թափանցիկ և օբյեկտիվ իրականացման, ծնողների հետ կապի և այլ խնդիրները:

Ֆակուլտետի գործունեության մեջ կան նաև բացթողումներ, այսպես՝ դեռևս ակտիվացման կարիք ունի ուսխորհրդի աշխատանքը, մտահոգիչ է ուսումնական լսարանների քրոնիկ պակասը, մասնագիտական կաբինետների բացակայությունը, ամբիոնների ու դեկանատի անբավարար կահավորվածությունը, որ չի կարող համապատասխանել կրթության արդի պահանջներին, ուսումնական համակարգիչների ֆիզիկական մաշվածությունը և այլն:

1. Պատմաբանասիրական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար

2. Ուշադրության կենտրոնում պահել կրթական բարեփոխումների գործընթացը ֆակուլտետում, կրթության որակի ապահովման

խնդիրը համարել ֆակուլտետում տարվող ուսումնագիտական աշխատանքների հաջողության ամենակարևոր ու առաջնահերթ նախապայմանը: Այդ հարցերը դարձնել ինստիտուտի որակի կենտրոնի, ուսումնագիտական վարչության և մասնագիտական ամբիոնների հետ որակի ֆակուլտետային հանձնաժողովի մշտական քննարկումների առարկա:

3. Ելնելով կրթական բարեփոխումների պահանջներից՝ լուրջ ուշադրություն դարձնել ուսումնական խորհրդատուների գործունեությանը իբրև ուսանողի հետ անմիջական կապի կարևոր օղակի, որին նկատելի դեր է վերապահվում կրթության որակի ապահովման գործընթացում:

4. Ամենօրյա ուշադրություն դարձնել ուսանողների կողմից ֆակուլտետում կարգուկանոնի պահպանման հարցերին, արագորեն արձագանքել ուսանողների բոլոր սոցիալական խնդիրներին, բարձրաձայնած հարցերին, անհարգելի բացակայության փաստերին, ուսանողական խորհրդի աշխատանքներին, ֆակուլտետային ուսանողական կյանքի կազմակերպմանը:

5. Ապահովել քննաշրջանների, միջանկյալ ստուգումների, ուսումնական պրակտիկաների անթերի կազմակերպումը, կուրսային աշխատանքների ու ավարտաճառերի արդյունավետ պաշտպանությունը, ուսանողական գիտական ընկերության նպատակամետ աշխատանքը՝ դրանք դիտելով իբրև կրթության որակի ապահովմանը նպաստող կարևոր գործոններ:

6. Մշտապես ուշադրության կենտրոնում պահել աշխատանքային կարգապահության հարցերը: Ամենօրյա աշխատանք տանել ֆակուլտետի դասախոսների, ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատառճը կրթության բարեփոխումների արդի պահանջներին լիովին համապատասխանեցնելու ուղղությամբ:

7. **Խնդրել ռեկտորատին** միջոցներ նախատեսել նոր ֆինանսական տարում՝ բարելավելու ֆակուլտետի հնացած գույքի նորացման, մասնագիտական գրականության պակասի լրացման և համակարգ-

չային լսարանը նոր տեխնիկայով հարստացնելու և վերանորոգելու նպատակով:

8. Դեկան Ս.Հայրապետյանի հաշվետվությունը դնել ինստիտուտի գիտխորհրդի քննարկմանը

ԼՄԵՑԻՆ - Պատմաբանասիրական ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա վարձավճարի մասնակի փոխհա -

տուցման մասին /հաղ.՝ դեկան Ս.Հայրապետյանի/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հովհաննիսյան, Ս.Կուրազյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Պատմաբանասիրական ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա վարձավճարի մասնակի

փոխհա- տուցման գործընթացը իրականացվում է ֆակուլտետային մանդատային հանձնաժողովի կողմից և կավարտվի ս/թ.դեկտեմբերի 10-ին: Առայժմ ստացված դիմումների քանակը 20 է:

ԼՄԵՑԻՆ - Հայ գրականության եւ լրագրության ամբիոնի միջնորդությունը Մեծ եղեռնի 100-ամյակի ֆակուլտետային միջոցառումների ավելացման մասին /հաղ.՝ ամբիոնի վարիչ Գ.Խաչիկյանի/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս. Կուրազյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ նախատեսված միջոցառումների մեջ ավելացնել «Մեծ եղեռնի թեման գրականության մեջ» հանրապետական գիտաժողով մարտ ամսի վերջին տասնօրյակում:

խորհրդի նախագահ՝

ֆակուլտետի դեկան

նիստի քարտուղար

Ս. Հայրապետյան

Է. Չոբանյան